

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Շուշան ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Բանալի բառեր: Աշխատանքի շուկա, ակտիվ քաղաքականություն, պասիվ քաղաքականություն, գործազրկության կրճատում, զբաղվածության կարգավորում

Պետության դերը զբաղվածության ոլորտում բնութագրվում է հատկապես զարգացող երկրներում, քանի որ այդ երկրներում այդ թվում Հայաստանում մշտապես նկատվում է աշխատանքի շուկայի քանակական և որակական անհավասակշռություն: Ճիշտ զբաղվածության քաղաքականություն մշակելու արդյունքում բարելավվում է երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը, հետևաբար նաև կյանքի որակը: Անկախ երկրում կատարվող իրավիճակից՝ զբաղվածության կառավարումն ունի օբյեկտիվ անհրաժեշտություն: Աշխատանքի շուկայում հավասարակշռության պահպանումն պետության կարևորագույն խնդիրներից մեկն է համարվում: Պետությունը մի կողմից անհրաժեշտ է ապահովի համապատասխան աշխատանքային կադրեր մյուս կողմից զսպի աշխատանքի առաջարկն: Զբաղվածության պետական քաղաքականության հիմնական սկզբունք կարող է հանդիսանալ¹

- աշխատանքի ազատ ընտրության հնարավորության ապահովումը,
- խտրականության բացառում՝ բնակչության բոլոր խավերի համար հավասար իրավունքների ապահովումը,
- արժանապատիվ աշխատանքի ապահովում՝ արգելելով հարկադիր և պարտադիր աշխատանքը,
- սոցիալական պաշտպանվածության ապահովումը,
- ստեղծել անհրաժեշտ պայմաններ գործազրկությունը նվազեցնելու, գործազուրկներին աշխատանք կամ նյութական օգնություն ցուցաբերելունը,
- տեղեկատվության համաչափություն և թափանցիկությունը,
- անձի հասարակական դերի բարձրացումը՝ կայուն զբաղվածությամբ,
- պետական աջակցությունն՝ ըստ առաջնահերթությունների:

Իհարկե պետության վարած քաղաքականությունը վերը նշված սկզբունքներով չի սահմանափակվում: Պետությունն աշխատանքի շուկայի կարգավորմանն ուղղված երկու տեսակ քաղաքականություն է մշակում՝ ակտիվ և պասիվ²: Պասիվի դեպքում պետությունը հիմնականում իրակա-

¹ ՀՀ աշխատանքի և զբաղվածության ոլորտի հիմնական օրենսդրական կարգավորումները՝ <http://www.esocial.am/am/inneremploymentsfereen>

² «ՀՀ աշխատանքի շուկան և զբաղվածության պետական կարգավորումը», Ռ.Ս. Ղանթարյան, Երևան 2003, էջ20

նացնում է գործազրկության հետևանքների մեղմացման գործընթացներ, այսպես՝ աշխատանք փնտրողների գրանցում և հաշվառում, նպաստի տրամադրում, ազատ աշխատատեղերի մասին տեղեկության տրամադրում, և երբեմն գործազուրկների վերամասնագիտացման կազմակերպում: Ակտիվի դեպքում պետությունը հստակ քայլեր է ձեռնարկում գործազրկությունը նվազեցնելու ուղղված, դրանց թվին կարելի է դասել աշխատատեղերի ավելացումը, աշխատուժի որակավորման բարձրացումը և այլն: Զբաղվածության պետական կարգավորման ընթացքում պետությունը օգտագործում է ինչպես ուղղակի այնպես էլ անուղղակի գործիքներ, ինչպես նաև հարկային, վարկային բյուջետային և այլ նորմատիվային օրենսդրական գործիքներ: Այդ միջոցառումների մեջ ներառվում են.

- աշխատանք փնտրողներին աշխատանքով ապահովում,
- զանգվածային ազատումների կանխում,
- նոր աշխատատեղերի և ինքնազբաղվածության ընդլայնում,
- աշխատունակների վերապատրաստում ու վերաորակավորում,
- ուշադրությունը կենտրոնացում ոչ միայն նպատակային այլև անմրցունակ խմբերի վրա՝ փախստականներ, մուրացկաններ, երկարաժամկետ գործազուրկներ, հաշմանդամներ և այլն:
- մասնագիտական խորհրդատվությունների տրամադրում:

Գծապատկեր 1-ում ներառված են այն հիմնական ուղղությունները, որոնք կարող են օգնել գործազրկության նվազեցման գործում: Աշխատանքի շուկայում հավասարակշռություն հաստատելու, գործազրկությունը նվազեցնելու և այլ քաղաքականություն մշակելու համար տարբեր երկրներ տարբեր քաղաքականություն են վարում, բայց զարգացած երկրները հիմնականում կիրառում են ակտիվ քաղաքականություն: Հայաստանի Հանրապետությունը հիմնականում իրականացնում է պասիվ քաղաքականություն, որի իրականացման համար ստեղծում է ռազմավարական ծրագրեր: Դրանցից է 2012թ. մշակված ռազմավարական ծրագիրը, որը ներառում է 2013-2018թթ. ընթացքում իրականացվող բարեփոխումները:

Ռազմավարություն մշակելու համար հիմք է հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, տվյալ ոլորտին վերաբերող մի շարք իրավական նորմեր, միջազգային կոնվենցիաներ և բազմաթիվ այլ ծրագրեր³:

Աշխատանքի շուկայում հավասարակշռություն պահպանելու համար պետությունը որոշակի միջոցառումներ պետք է մշակի: Այդ միջոցառումները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի՝

³ ՀՀ կառավարության 2012 թ. նոյեմբերի 8-ի նիստի N 45 արձանագրային որոշում

<p>Իրականացնել աշխատանքի շուկային մշտական ուսումնասիրում և վերլուծություն</p>	<ul style="list-style-type: none"> • պարբերաբար մոնիթորինգի իրականացում և ազատ աշխատատեղերի հաշվառում • աշխատանք փնտրողների գրանցում և հաշվառում • աշխատանքի պահանջարկի ուսումնասիրում և վերլուծություն
<p>Բնակչության խորհրդատվության ապահովում</p>	<ul style="list-style-type: none"> • անհատական խորհրդատվություն • մասնագիտական կողմնորոշման ապահովում
<p>Բնակչության տեղեկատվության ապահովում</p>	<ul style="list-style-type: none"> • թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության ապահովում • ծրագրերով ապահովում
<p>Աշխատանք փնտրողների համար մասնագիտական վերապատրաստումների իրականացում</p>	<ul style="list-style-type: none"> • հատուկ վերապատրաստման կենտրոնների ստեղծում • բուհերին կից մասնագիտական վերապատրաստումների ստեղծում
<p>Բնակչության աշխատանքի տեղավորում</p>	<ul style="list-style-type: none"> • աշխատանք փնտրողներին աշխատանքով տեղավորում • աշխարհագրական միգրացիայի կազմակերպում
<p>Սոցիալական պաշտպանվածություն և ֆինանսական ապահովում</p>	<ul style="list-style-type: none"> • գործազուրկներին գործազրկության նպաստի տրամադրում • հասարակական աշխատանքների աջակցում • սոցիալական պաշտպանվածության կարիք ունեցողների համար աշխատանքի ստեղծում և տեղավորում • աշխատանքը կորցնողների վտանգի առջև կանգնածներին օգնության ցուցաբերում
<p>Զբաղվածության միջազգային կարգավորում</p>	<ul style="list-style-type: none"> • միջազգային միգրացիայի կարգավորման ծրագրերի կազմում • արտասահմանյան աշխատուժի ընդգրկում և ներհանրություններում

Գծապատկեր 1. Զբաղվածության ոլորտի համար նախատեսված միջոցառումներ⁴

Ուղղվածության միջոցառումների ծրագիրը իր մեջ ներառում է.

1. Տնտեսություն - աշխատաշուկա համապատասխանության ապահովում: Վերընշված ծրագրի շրջանակներում պետությունը նպատակ ունի՝

✓ Նոր աշխատատեղերի ստեղծում հատկապես ուշադրություն դարձնելով գյուղական համայնքներում աշխատատեղերի ավելացմանը, որի հետևանքով կխթանվի կայուն զբաղվածությունը;

⁴ Գծապատկերը առաջարկվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով զբաղվածության ոլորտի համար նախատեսված միջոցառումներ

✓ Ուշադրություն դարձնել ՓՄՁ զարգացմանը, հատկապես խթանել ինքնազբաղվածությունը

Այս առումով պետությունը 2016թ. ընդունեց ՀՀ օրենքը «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին»⁵, որտեղ կարգավորվում է ֆիզիկական անձանց՝ անհատ ձեռնարկատերերի հարաբերությունները և վերջիններիս տրվում են հարկային արտոնություններ: Հաջորդ խթանող գործընթացը կապված է «ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունման հետ⁶, ըստ որի պետությունը նպատակ ունի բարձրացնել մրցակցությունը, խթանել օտարերկրյա և վենչուրային ներդրումները, ներգրավվել հմուտ աշխատուժ՝ մրցունակ աշխատավարձի ապահովման միջոցով⁷:

2. Աշխատաշուկա-կրթական համակարգ կապի ապահովում: Այս ծրագրի շրջանակներում պետությունը նպատակ ունի՝

➤ Աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի համապատասխանեցում, որակյալ ձևավորում:

Ներկայումս պետությունը քայլեր է իրականացնում բուհերում մասնագիտական փոփոխություններ կատարելու հարցում, բուհերը համագործակցում են արտերկրի բուհերի հետ, որի արդյունքում որոշ դեպքերում ուսանողներ կարող են ուսումը շարունակել տվյալ համալսարանում: Տեղի է ունենում ծրագրերի թարմացում և դասավանդողների վերապատրաստում:

3. Ժողովրդագրական և տարածքային համաչափ զարգացում: Այս ծրագրով պետությունը փորձում է մեղմել միգրացիան: Այսպես 2015թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ օրենքը «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին»⁸, որտեղ ներառված են 31 սահմանամերձ բնակավայր, և այդ բնակավայրերին տրվում են մի շարք հարկային արտոնություններ:

Այսպիսով, զբաղվածության ոլորտում պետության տնտեսական քաղաքականությունը ունի պասիվ բնույթ, որի արդյունքում չի կարող էական դրական տեղաշարժեր ապահովել աշխատանքի շուկայում: Զբաղվածության ոլորտում պետությունը հաշվառում է գործազուրկներին, վճարում է նպաստ, սակայն այս միջոցները անբավարար են այս ոլորտին:

⁵ ՀՀ օրենքը «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀՊՏ 2016.12.30/95(1275).1

⁶ «ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1

⁷ «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1

⁸ «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1

Շուշան ԱՍԱՏՐՅԱՆ

Գործազրկության նվազեցման մոտեցումները

Բանալի բառեր. Աշխատանքի շուկա, ակտիվ քաղաքականություն, պասիվ քաղաքականություն, գործազրկության կրճատում, զբաղվածության կարգավորում

Անկախ երկրի զարգացվածության աստիճանից պետության մասնակցությունը զբաղվածության կառավարման գործում կարևոր է, սակայն չկա միասնական համակարգ զբաղվածության կարգավորման գործում: Այն տարբեր երկրներում տարբեր է հաշվի առնելով տվյալ երկրի տնտեսական սոցիալական, ազգային առանձնահատկությունները: Աշխատանքի շուկան կամ զբաղվածությունը կարգավորելիս պետությունը իրականացնում է 2 տիպի քաղաքականություն՝ ակտիվ և պասիվ: ՀՀ-ում իրականացվում է հիմնականում պասիվ զբաղվածության քաղաքականություն:

Shushan ASATRYAN

Approaches to reduce unemployment

Key words: Labour Market, Active Policies, Passive Policies, Unemployment Reduction, Employment Regulation

Every country is important for employment management, but there is no common employment regulation. It is different in every county and it is depends on many other things: economic social and national peculiarities. In regulating labour market or employment, the government implements two types of policies: active and passive. In Armenia, mainly the passive employment policy is implemented.

Шушан АСАТРЯН

Подходы к сокращению безработицы

Ключевые слова: рынок труда, активная политика, пассивная политика, безработица, сокращение безработицы, регулирование безработицы

Независимо от уровня развития страны весьма важно участие государства в регулировании занятости населения, однако до сих пор нет единой системы ее регулирования. Она в разных странах различна с учетом экономических, социальных, национальных особенностей данной страны. При регулировании рынка труда или занятости населения государство проводит политику двух типов: активную и пассивную. В РА проводится в основном пассивная политика занятости.